Վանաձորի Դ.Վարուժանի անվան

№16 հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնակատար՝

_____Ա.Դալլաքյան

Կ.Տ. «30» _____ 2023թ.

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ

Դ.ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՆՎԱՆ №16 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ-Ի

Պատմաբանասիրական

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ

2023 – 2024 ՈՒՍՏԱՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՄՄ Նախագահ՝ /Տ.Սաղաթելյան/

ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ - ԾՐԱԳԻՐ

№	Աշխատանքի բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարող
1.	Հրավիրել մեթոդական միավորման ամենամսյա նիստեր (անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ): Նախապես պլանավորել օրակարգերը և արձանագրել դրանք գրանցամատյանում:	ամիսը մեկ անգամ	մասնախմբի ղեկավար
2.	Հետևողականորեն տեղեկանալ և մասնախմբի անդամներին հաղորդակից դարձնել ՀՀ ԿԳՄՄՆ հրապարակած բոլոր որոշումներին, հումանիտար առարկաների դասավանդմանն ուղղված բոլոր հնարավոր փոփոխություններին: Ժամանակին ծանոթանալ ,քննարկել և արձագանքել ստացված բոլոր գրություններին,կատարել հանձնարարականները: Հետագա աշխատանքները հարմարեցնել դրանց:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
3.	Քննարկել և հաստատման ներկայացնել հումանիտար առարկայական մեթոդական միավորման աշխատանքային տարեկան պլանը, որի դրույթները բխում են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանից և համապատասխանում են ՄՄ կանոնադրությանը: Նրանում ընդգրկել նախորդ ուստարվա բացթողումները: Ուստարվա ընթացքում աշխատանքները կազմակերպել ըստ այդ պլանի:	օգոստոս	տնօրեն, մասնախմբի ղեկավար, անդամներ
4.	Քննարկել առարկայական ուսումնական ծրագրերը, չափորոշիչները, մեթոդական ձեռնարկները, դասագրքերը և դրանցում կատարված փոփոխությունները:	օգոստոս	մասնախմբի ղեկավար, անդամներ
5.	Կատարել 2023--2024 ուստարվա նախնական դասաբաշխում և առաջարկություն ներկայացնել դպրոցի տնօրենին:	օգոստոս	մասնախմբի ղեկավար, անդամներ
6.	Դպրոցի տնօրենին առաջարկություն ներկայացնել 2023-2024 ուստարվա ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ՝ հիմք ընդունելով ԿԳՄՄՆ ցուցումները, առարկայական ծրագրային նյութերի ծանրաբեռնվածությունը,մասնախմբի դիտարկումները և դպրոցի նախասիրությունները:	օգոստոս	մասնախմբի ղեկավար, անդամներ
7.	Քննարկել նոր ՀՊՉ-ի հիմնական դրույթները: Քննարկել հանրակրթական դպրոցում կիրառվող նոր չափորոշիչներով նախատեսվող գնահատման տեսակները, դրանց կիրառման նպատակահարմարությունն ու առանձնահատկությունները հումանիտար առարկաներից: Տարանջատել գիտելիքների և կարողությունների տիրապետման տարբեր մակարդակներն ըստ առարկայական չափորոշիչների:	օգոստոս	մասնախմբի ղեկավար, անդամներ

8.	Առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՄՆ հաստատված ծրագրով, գնահատման մեթոդաբանությամբ և ցուցումներով, քննարկել և մանկավարժական խորհրդի հաստատմանը ներկայացնել առաջարկություն տարբեր տեսակի աշխատանքների նվազագույն քանակի վերաբերյալ: Թեմատիկ պլանները կազմելիս հիմք ընդունել դրանց վերաբերյալ մանկավարժական խորհրդի կողմից հաստատված որոշումը և ուսումնական տարվա ընթացքում առաջնորդվել դրանով:	օգոստոս	մասնախմբի ղեկավար, անդամներ
9.	Քննարկել հանրակրթական դպրոցում կիրառվող գնահատման տեսակները, դրանց կիրառման նպատակահարմարությունն ու առանձնահատկությունները հումանիտար առարկաների դասերին:	օգոստոս	մասնախմբի ղեկավար, անդամներ
10.	Քննարկել թեմատիկ պլանների կազմման վերաբեյալ ԿԶՆԱԿ-ի առաջարկած ուղեցույցները, ուսուցիչների վերջին վերապատրաստումների ընթացքում ներկայացված բոլոր ցուցումները, ուղղորդել ուսուցիչներին թեմատիկ պլաններում առանձնացնել տվյալ թեմայի դասավանդման նպատակները և ակնկալվող վերջնարդյունքները, որոնք բխում են պետական առարկայական չափորոշչային պահանջներից:	օգոստոս	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
11.	Քննարկել մասնախմբի առարկայական տարեկան թեմատիկ պլանների նախագծերը, դրանցում թեմաների նպատակահարմար բաշխվածությունը, համապատասխանությունը պետական առարկայական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի, օրացույցային աշխատանքային ժամաքանակի հետ: Ներկայացնել դրանք տնօրենի հաստատմանը:	օգոստոս	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
12.	Քննարկել և հաստատման ներկայացնել սովորողների նախագծային աշխատանքների թեմաները և դրանց պլանները:	օգոստոս	մասնախմբի անդամներ
13.	Դիտարկել ԿԱՊԿ աշակերտների կարիքները՝ համագործակցելով դպրոցի ՄՀԱ թիմի հետ: Քննարկել և մանկավարժական խորհրդին ներկայացնել ԿԱՊԿ աշակերտների ԱՈՒՊ-ները /առարկայացանկը/:	ուստարվա սկզբին	մասնախմբի ղեկավար, անդամներ, ՄՀԱ թիմ
14.	Օժանդակել դասավանդող ուսուցիչներին ԱՈՒՊ-ներ ըստ հաստատված առարկայացանկի կազմելու հարցում՝ հիմք ընդունելով պետական առարկայական չափորոշչային պահանջները՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների հիման վրա:	ուստարվա սկզբին	մասնախմբի ղեկավար, անդամներ, ՄՀԱ թիմ
15.	Առաջնորդվել հաստատված ԱՈՒՊ-ներով և մշտապես համագործակցել դպրոցի ՄՀԱ թիմի հետ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի անդամներ, ՄՀԱ թիմ

16.	Կազմակերպել մեթոդական քննարկումներ, պարզաբանել դասի նպատակի և վերջնարդյունքները ձևակերպման կարևորությունը՝ պետական առարկայական չափորոշիչներին համապատասխան: Քննարկել դասի կառուցվածքի և դրա տարբեր փուլերի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութերի նպատակահարմարության, ծավալի, հագեցվածության, միջառարկայական կապերի ամրապնդման և կրթության որակի բարձրացմանն ուղղված այլ ընթացիկ հարցեր:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
17.	Դպրոցում իրականացնել ուսուցիչների փոխօգնություն առկա դժվարությունների հաղթահարման նպատակով: Ցուցաբերել մեթոդամանկավարժական օժանդակություն սկսնակ ուսուցիչներին:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
18.	Ուսումնասիրել սովորողին տրվող ինքնուրույն աշխատանքի հանձնարարման առանձնահատկությունները: Կրթությունն ուղղել սովորողի ինքնուրույն մտածողության, հետազոտական և վերլուծական մտքի զարգացմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
19.	Խթանել ուսուցիչների կողմից տարբեր կրթական հարթակների կիրառումը ուսումնական պրոցեսում՝ ապահովելով տեղեկատվության զանազան ձևերից օգտվելու հմտությունների զարգացում:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
20.	Մշտապես նպաստել դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպման գործընթացին՝ նախապես պլանավորել անելիքներն ամսվա կտրվածքով, փոխտնօրենին ներկայացնել նախատեսվող տեսադասերի, նպատակային դասալսումների անցկացման ժամանակացույց:	ուստարվա ընթացքում	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
21.	Նպաստել դպրոցում հումանիտար առարկաների նկատմամբ հետաքրքրության զարգացմանը, խթանել սովորողների հետաքրքրությունը, նրանց ներգրավելով ուսուցման գործընթացի մեջ: Քննարկել, վերլուծել ուստարվա ընթացքում կատարված աշխատաքները:	ուստարվա ընթացքում	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
22.	Անցկացնել դասալսումներ (ամիսը 4-5), կազմակերպել նաև փոխադարձ դասալսումներ և կատարել քննարկումներ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
23.	Ուսումնասիրել և ընդհանրացնել մանկավարժական փորձը և այն ներդնել գործնականում: Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ,սեմինարներ,ընթերցումներ,զեկուցումներ, որոնք կնպաստեն ուսուցչի աշխատանքի արդյունավետության և կրթության որակի բարձրացմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
24.	Համագործակցել դպրոցի մյուս առարկայական մասնախմբերի հետ՝ միջառարկայական կապերի ապահովման նպատակով:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ

25.	Կազմակերպել ուսուցիչների փոխօգնություն և փորձի փոխանակում՝ ՏՀՏ նպատակային կիրառմամբ դասեր անցկացնելու նպատակով:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ, ինֆորմատիկայի ուսուցիչ
26.	Կապ հաստատել և համագործակցել այլ դպրոցների հումանիտար առարկաների ուսուցիչների հետ՝ նպաստելով փորձի փոխանակմանն ու ուսուցիչների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
27.	Մասնակցել կազմակերպվող դասընթացներին, սեմինարներին, զբաղվել ինքնակրթությամբ, իրազեկվել և տիրապետել համապատասխան առարկաների դասավանդմանն ուղղված փոփոխություններին, գիտությանն ու մանկավարժությանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
28.	Խթանել ուսուցիչների մասնակցությունն ու ակտիվությունը կրթական առցանց ծրագրերում eTwinning Plus, e-School և այլն): Օժանդակել ուսուցիչներին ուսումնական նպատակներով կիրառել Google Classroom, Microsoft Teams և այլ կրթական հարթակներ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
29.	Խրախուսել և աջակցել ուսուցիչներին որակավորման բարձրացման, կամավոր ատեստավորման մասնակցության և տարակարգի ձեռքբերման գործում:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
30.	Վերահսկել էլեկտրոնային մատյանների՝ պատասխանատու և պատշաճ ձևով լրացումը ա. թեմաները գրանցել ըստ թեմատիկ պլանի բ. տնային աշխատանքները գրանցել բոլոր դասերի համար գ. գնահատականները նշանակել ժամանակին դ.թեմատիկ աշխատանքերի գնահատականները անցկացնել երեք օրվա ընթացքում:	ուստարվա ընթացքում	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
31.	Օժանդակել տնօրենությանը՝ մասնախմբի առարկաներից ստուգումներ կազմակերպելու,դրանց դրվածքն ուսումնասիրելու, դասալսումներ իրականացնելու գործում: Կատարել արդյունքների քննարկում և վերլուծություն:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար
32.	Անցկացնել թեմատիկ,գործնական աշխատանքերի կազմակերպման վիճակի ուսումնասիրություն:	ուստարվա ընթացքում	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար
33.	Օժանդակել և մասնակցել բոլոր համադպրոցական, ինչպես նաև առարկայական միջոցառումների, օլիմպիադաների, մրցույթների անցկացմանը:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
34.	Խթանել աշակերտների հետաքրքրությունը պոեզիայի նկատմամբ, հետևողական աշխատանք իրականացնել և նախապատրաստել աշակերտներին ասմունքի փառատոններին:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ

35.	Աշակերտների ընթերցասիրությունը խթանելու նպատակով կազմակերպել գրքի քննարկումներ:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
36.	Անհատական աշխատանք իրականացնել օժտված աշակերտների հետ, նպաստել նրանց գիտելիքների հարստացմանը: Խթանել և նախապատրաստել աշակերտների մասնակցությունը ՀՀ ԿԳՄՄՆ կողմից կազմակերպվող առարկայական օլիմպիադաներին և մրցույթներին:	ուստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար, անդամներ
37.	Վերլուծել նոր, փորձարկվող դասագրքերը, քննարկել դրանցում ծրագրային և չափորոշչային պահանջների համապատասխանության հարցը: Ներկայացնել փորձագիտական կարծիք:	ըստ անհրաժեշտության	մասնախմբի ղեկավար, անդամներ
38.	Քննարկել 2023-2024 ուստարվա աշակերտների փոխադրման, ավարտման և քննությունների կազմակերպման կարգը, քննությունների անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը:	ապրիլ մայիս 2024	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
39.	Համագործակցելով տնօրենության հետ, կազմակերպել նախաքննական վիճակի ստուգում՝ « Հայոց լեզու», «Գրակա-նություն»,« Հայոց պատմություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն» առարկաներից 9-րդ դասարաններում: Կատարել վերլուծություն և բացթողումներն ու թերությունները վերացնելու ուղղությամբ իրականացնել հետևողական աշխատանք:	ապրիլ մայիս 2024	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
40.	Կազմակերպել առարկայական խորհրդատվություններ «Հայոց լեզու», «Գրականություն»,«Հայոց պատմություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն» առարկաներից, նախապատրաստել սովորողներին ավարտական քննություններին:	մայիս հունիս 2024	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
41.	Ստուգել ուսումնական ծրագրային նյութի կատարողականի վիճակը՝ առարկայի պարտադիր ժամաքանակի, ուսումնական նյութի դասավանդման, տարբեր տեսակի աշխատանքների կատարման և գնահատման համապատասխանությունը հաստատված թեմատիկ պլաններին, կազմակերպել հնարավոր բացթողումների լրացումը: Հաշվետվություններ ներկայացնել մանկավարժական խորհրդի նիստերին:	դեկտեմբեր մայիս	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար
42.	120-200 ժամ բացակայություն ունեցող սովորողների համար ամփոփիչ ստուգողական աշխատանքների և քննությունների կազմակերպում: Յուրաքանչյուր առարկայից կազմել, քննարկել և հաստատման ներկայացնել ստուգողական աշխատանքի և քննության տարբերակներ՝ ընդգրկելով սովորողի բացակայած ժամանակահատվածի ուսումնասիրված նյութը:	մայիս 2024	ՈՒԱԳ տեղակալ, մասնախմբի ղեկավար, անդամներ
43.	Ըստ գործող կարգի՝ առաջնորդվելով ժամանակացույցով, նպատակային կազմակերպել ավարտական	մայիս հունիս 2024	քննական առարկաների ուսուցիչներ

	քննություններին նախապատրաստող խորհրդատվությունները հումանիտար առարկաներից:		
44.	Անբավարար գնահատված աշակերտներին հանձնարարել ամառային առաջադրանքներ և աշխատանք իրականացնել այդ աշակերտների հետ: Օժանդակել տնօրենությանը վերաքննությունների կազմակերպման աշխատանքերում:	հունիս օգոստոս 2024	մասնախմբի ղեկավար, անդամներ
45.	Կատարել առաջադիմության արդյունքների կիսամյակային,տարեկան և քննական ամփոփումներ: Ներկայացնել հաշվետվություն մասնախմբի և մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակ:	դեկտեմբեր հունիս	մասնախմբի ղեկավար
46.	Կատարել 2024-2025 ուստարվա նախնական ժամաբաշխում: Ուսպլանով նախատեսված պետական և դպրոցական բաղադրիչների ժամաքանակների վերաբերյալ առաջարկություն ներկայացնել դպրոցի տնօրենին:	Հունիս 2024	մասնախմբի ղեկավար, անդամներ
47.	Օժանդակել հումանիտար առարկաների վերաքննությունների կազմակերպմանը:	Օգոստոս 2024	
	Աշխատանքի բովանդակությունը	**կատարման ժամկետը**	**կատարող**
	Միջոցառումներ		
	«Հայոց լեզուն տունն է հայուն»՝ ցերեկույթ	12.02-16.02.24	Ն.Թամրազյան
	Միջոցառում՝ «Երջանկության մեխանիկան»	11.03-15.03.24	Ա. Գյուլինյան
	Մրցույթ-միջոցառում՝«Մայրենի լեզուն մեր ազգի հոգին է»	20.02.24	Ս.Արզումանյան
	«Կանայք Թումանյանի կյանքում»՝ ցերեկույթ	19.02-23.02.24	Տ.Սահակյան
	Утренник ,,Международный женский день" -7բ-րդ դասարան	07.03.24	Մ.Ղազարյան
	«Կյանքդ կյանքիս համար»՝ միջոցառում	01.04-05.04.24	Տ.Սաղաթելյան Ն.Ասատրյան
	«Պատմության լաբիրինթոս»՝ Վիկտորինա	27.11-01.12.23	
	Բանավեճ՝ «Անհատները պատմության մեջ»	26.02-01.03.24	
	Հայաստանի ազգային փոքրամասնությունների (եզդիական համայնք) ավանդական մշակույթի ու կենցաղի, ավանդույթների ու տոների այցելություն-ծանոթացում:	21.10.23	
	«Զատիկ»՝ միջոցառում	01.04-05.04.24	Ա.Ուլիխանյան
	«Որքանով ենք ծանոթ աշխարհի տոներին»՝ խաղ-վիկտորինա- 6ա,բ-րդ դասարան	04.03-07.03.24	Մ.Ալիխանյան Շ.Գաբրիելյան
	Նորարարական դասեր		
	Հովհ. Թումանյանի ,,Թմկաբերդի առումը,, պոեմը- 8ա-րդ դասարան	25.01.24	Ն.Թամրազյան
	Ստեփան Զորյան «Պապն ու թոռը»- 6բ- րդ դասարան	19.10.23	

	«Սոսկածանցավոր բայեր»՝ 7ա-րդ դասարան	14.02.24	Ա.Գյուլինյան
	«Սպիտակ ձի» - 7ա-րդ դասարան	17.10.23	
	«Գելը» պատմվածքը- 5բ-րդ դասարան	20.12.23	Ս.Արզումանյան
	«Կանաչ դաշտը»- 7բ-րդ դասարան	15.03.24	Տ.Սահակյան
	А.С.Пушкин ,,Сказка о рыбаке и рыбке".Употребление числительных для обозначения возраста. -7բ-րդ դասարան	25.04.24	Մ.Ղազարյան
	,,Родительный падеж имен существительных,,- 6բ-րդ դասարան	04.12.23	Մ.Դալլաքյան
	«Մոնղոլական կայսրություն»-7ա-րդ դասարան	15.04.24	Ն.Ասատրյան
	«Ազատություն»- 8ա-րդ դասարան	01.02.24	Տ.Սաղաթելյան
	Scotland-8ա-րդ դասարան	22.01-26.01.24	Շ.Գաբրիելյան
	Մանկավարժամեթոդական զեկուցումներ		
	«Քարտեզների օգտագործումը հետսառըպատերազմյան զարգացումները թեման ուսումնասիրելիս»	սեպտեմբեր	Ն.Ասատրյան
	«Վարդանանք»		Ն.Թամրազյան
	Բանաստեղծության ուսումնասիրությունը տեքստի և երաժշտության համադրությամբ»	հոկտեմբեր	Ա.Գյուլինյան
	,,Сравнительный анализ русских и армянских пословиц как отражение ментальности нации-նոյեմբեր	նոյեմբեր	Մ.Դալլաքյան
	«Հեքիաթների դաստիարակչական նշանակությունը»	դեկտեմբեր	Ս.Արզումանյան
	«Բանավոր խոսքի զարգացման մեթոդներ և հնարներ»	հունվար	Տ.Սահակյան
	,,Методика преподавания русского языка в начальных классах"	փետրվար	Մ.Ղազարյան
	«Վիեննայի վեհաժողով»	մարտ	Տ.Սաղաթելյան
	«Մեդիագրագիտության ինտեգրումը անգլերեն լեզվի ուսուցման մեջ»	ապրիլ	Շ.Գաբրիելյան
	«Փոխառնված բառերի կիրառությունը օտար լեզվում»	մայիս	Մ.Ալիխանյան
	Նախագծային աշխատանքներ		
	«Մեր տունը»	1-ին կիսամյակ	Ա.Գյուլինյան

	Վահե Հայկ«Կաթիդ փարան չմոռնաս»	2-րդ կիսամյակ	Տ.սահակյան
	Մուլտֆիլմի կամ բլոգի ստեղծում	2-րդ կիսամյակ	Տ.Սահակյան
	«Healty Lifestyle»	2-րդ կիսամյակ	Շ.Գաբրիելյան
	«Ժողովրդական խաղալիքը որպես ռուսական մշակույթի մոռացված մեծագույն արժեք»	2-րդ կիսամյակ	Մ.Դալլաքյան